

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է արտաքին մրցույթ՝ Նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.15-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Արտաքին մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.15-Մ2-4) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.15-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմումները ներկայացնում են **Էլեկտրոնային տարբերակով՝** քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ <https://cso.gov.am/> միջոցով: Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել <https://cso.gov.am/> կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին:

Ծանոթանալով Թեստավորման մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղծի օգնությամբ ներկայացնել Էլեկտրոնային դիմում: Սեղմելով «Դիմել» ստեղծը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր Էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում «Իմ էջը» բաժնում («Ծանուցումներ»

զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ»,

«Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել» կոճակը:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացվում են քսանչորսամյա ռեժիմով:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում «Մրցույթներ» բաժնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.15-

Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող թեստավորման մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» կոճակով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2

(երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի»

«Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի»

«Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված 2 նշանը:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով <https://hartak.cso.gov.am/> հղումի «ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

ՀՀ քաղաքացիները թեստավորմանը ներկայանում են անձնագրով և/կամ նույնականացման քարտով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (զինվորական գրքույկ, ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.15-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում.
- անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճենը.
- դիպլոմ (ներ)ի լուսապատճեն (ներ)ը.
- աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ (եր)ի լուսապատճեն (ներ)ը.
- արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի) լուսապատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից կցագրման վկայականի լուսապատճենը.
- մեկ լուսանկար՝ 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի հունիսի 1-ի ժամը՝ 9:00-ից մինչև 2021 թվականի հունիսի 7-ը՝ ժամը 24:00-ը: Դիմումներն ընդունվում են քանչորսժամյա ռեժիմով:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 15:00-ին, Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տերյան 89, հարկ 2-րդ, դահլիճ 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի հուլիսի 7-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ, դահլիճ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 5,6,14,34,180,181,182,183,184,185,186,189
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք», հոդվածներ՝ 4, 10, 12, 19, 22, 25, 37
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139125>

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
հոդվածներ՝ 64, 106,116,117, 122,123,163, 218,228,300,332,368,542,543, 1185,1216, 1217, 1218, 1219

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 15, 20, 30, 35, 50, 52
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>

- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 30, 37
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>

- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2,3,4,6,7,22,23,32.34,35
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>

- «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք
հոդվածներ՝ 3, 5, 7,12
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137135>

- «Գնումների մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2,6,10,11,15,22-26, 29, 30
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121796>

- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք հոդվածներ՝ 1, 1.2, 3, 6, 17, 39
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139016>

- «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
հոդվածներ՝ 9, 14, 16
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138972>

- «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 12, 13, 16, 24
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120816>

- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 1 - 6, 17, 21, 22, 23, 24, 28, 39, 39.1, 39.2, 39.6, 40, 59
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123080>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղաջյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99
հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- <<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, Երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114, 124-126,134,137,142,147-148,198-201
հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝

- <<Հաշվետվությունների մշակում>> կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf
- <<Խնդրի լուծում>> կոմպետենցիա, հղումը՝
https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf
- <<Բարեվարքություն>> կոմպետենցիա
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, 010-511-318, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՂՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ, ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) տնտեսագիտական վերլուծության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գլխավոր տնտեսագետ (ծածկագիրը՝ 22-33.15-Ս2-4)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր տնտեսագետը կամ Բաժնի ավագ տնտեսագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

1) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների եկամուտների և ծախսերի տարեկան և միջանկյալ հաշվետվությունների ընդունումը, ուսումնասիրությունը և համեմատական ծախսերի ուսումնասիրությունը, ծախսային նախահաշիվների ուսումնասիրությունը և հաստատման գործընթացը.

2) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերություններում շահութաբաժինների քննարկման, հաստատման, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացի կազմակերպումը.

3) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների կիսամյակային և տարեկան հաշվապահական հաշվետվությունների ստացման և ամփոփման աշխատանքները.

4) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, հարկերի գծով ունեցած պարտավորությունների վերաբերյալ հաշվետվությունների ստացումը և ամփոփումը.

5) իրականացնում է համակարգի ընկերությունների տնտեսական ցուցանիշների վերաբերյալ ամսական հաշվետվությունները ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ներկայացնելու աշխատանքները.

6) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների համար վարկային ռեսուրսների, փոխառությունների ներգրավման հետ կապված աշխատանքները.

7) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների ֆինանսական հոսքերի, ֆինանսատնտեսական ցուցանիշների կանխատեսման, նպատակային ծախսումների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները.

8) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների գործարար ծրագրերի, կառուցվածքի և հաստիքացուցակի սահմանված կարգով հաստատման գործընթացը.

9) իրականացնում է հարկային մարմինների հետ նախարարության ենթակայության ընկերությունների հարկերի վճարումների վերաբերյալ ամենամյա փոխադարձ հաշվարկների ակտերում ներառված տվյալների ճշտման և պարտավորությունների մարման վերաբերյալ կանխատեսումների ներկայացման աշխատանքները.

10) իրականացնում է վարչական վիճակագրական ռեգիստրի վարումը, այդ թվում՝ հայկական Էներգահամակարգի արտադրող կայանների էլեկտրական Էներգիայի արտադրության, առաքման և ապրանքային արտադրանքների մասին ու էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման մասին վարչական վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև ըստ տնտեսության ճյուղերի

Էլեկտրական Էներգիայի բաշխման հաշվեկշռի հաշվետվության և տրանսպորտի բնագավառին վերաբերող համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) միջոցով հավաքագրված տվյալների ներկայացումը Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե.

11)իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների աշխատողների թվաքանակի, միջին ամսական աշխատավարձի և աշխատավարձի ֆոնդի վերաբերյալ տեղեկատվության ստացումը և ամփոփումը.

12)իրականացնում է Նախարարության բնագավառի միջնաժամկետ ծախսային ծրագրերի և տարեկան բյուջետային հայտերի հիմքում դրվող առանձին եկամուտների գծով բյուջետային մուտքերի կանխատեսումների ամփոփման աշխատանքները.

13)իրականացնում է Էներգահամակարգի ֆինանսական առողջացման ծրագրի համակարգման աշխատանքները.

14) իրականացնում է Նախարարության ենթակա ընկերությունների գույքի մասնավորեցման (օտարման) համար ելակետային տվյալների ստացումը, ամփոփումը և ներկայացումը.

15)իրականացնում է ՌԴ Էներգետիկայի նախարարության հետ բնական գազի և նավթամթերքների տարեկան ինդիկատիվ հաշվեկշիռների կազմման և փոխհամաձայնեցման աշխատանքներին.

16)իրականացնում է ԵԱՏԽ-ի հետ յուրաքանչյուր տարի՝ եռամյա ինդիկատիվ հաշվեկշիռների հաստատման աշխատանքները.

17)իրականացնում է ընդերքի ոլորտի կազմակերպությունների կողմից վճարած բևօգտագործման վճարների (ներառյալ ռոյալթիների), տուրքերի վերաբերյալ ամսական տեղեկատվության ամփոփման աշխատանքները.

18)իրականացնում է մասնավորեցման ռազմավարությամբ պայմանավորված՝ Նախարարության ենթակա պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների մասնավորեցման ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքներին.

19)իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ Նախարարության ենթակա ընկերությունների սակագների, դրանց մեթոդոլոգիաների և այլ իրավական ակտերի հետ կապված հարցերի շուրջ համագործակցությունը, մասնակցում է Հանձնաժողովի նիստերին.

20)իրականացնում է տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ստացված հաշվետվությունների ներկայացումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

21)իրականացնում է իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները:

Իրավունքները՝

1) պահանջել Նախարարության ենթակա ընկերությունների եկամուտների և ծախսերի տարեկան և միջանկյալ հաշվետվությունները, նախորդ տարվա գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե շահութաբաժինների վճարման չափերի մասին ամփոփ առաջարկությունները, ֆինանսական հաշվետվությունները, շահութաբաժինների հաշվարկները, հարկային մարմիններին ներկայացված և վերջիններին կողմից հաստատված՝ շահութահարկի հաշվարկների պատճենները, ՀՀ կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերի առկայության դեպքում՝ նաև իրականացված (իրականացվող) ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկանքները.

2) Նախարարության ենթակա ընկերություններից պահանջել կիսամյակային և տարեկան հաշվապահական հաշվետվությունները (Ձև 1 և Ձև 2), դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, հարկերի գծով ունեցած պարտավորությունների վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ.

3) հարկային մարմիններից ստանալ Նախարարության ենթակա ընկերությունների հարկերի պարտավորությունների և վճարումների վերաբերյալ ամենամյա տվյալները.

4) հավաքագրել «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ից թիվ 1 (ամսական) և թիվ 2 (ամսական) վիճակագրական հաշվետվությունները և տրանսպորտի բնագավառին վերաբերող համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունները (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն).

5) ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ներկայացման համար պահանջել Էներգահամակարգի ընկերությունների տնտեսական ցուցանիշների վերաբերյալ ամսական հաշվետվությունները և լրացուցիչ այլ տեղեկատվություններ.

6) պահանջել տեղեկատվություն «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր»

վարկային համաձայնագրի շրջանակներում «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ներին տրամադրվող վարկային միջոցների փաստացի և կանխատեսվող մասհանումների վերաբերյալ.

7) Նախարարության ենթակա ընկերություններից հավաքագրել հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և կանխատեսվող ֆինանսական հոսքերի, ֆինանսատնտեսական ցուցանիշների կանխատեսումների, նպատակային ծախսումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն.

8) Նախարարության ենթակա ընկերություններից ստանալ գործարար ծրագրերի, կառուցվածքի և հաստիքացուցակի վերաբերյալ տեղեկատվություն, լրացուցիչ հիմնավորումներ և պարզաբանումներ.

9) Նախարարության ենթակա ընկերություններից պահանջել ընկերությունների աշխատողների թվաքանակի, միջին ամսական աշխատավարձի և աշխատավարձի ֆոնդի (համապատասխան ձևաչափերով), միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի հիմքում դրվող առանձին եկամուտների գծով բյուջետային մուտքերի՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերի կանխատեսումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության.

10) ստանալ լրացուցիչ տեղեկատվություն և այլ նյութեր Էներգահամակարգի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում.

11) Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի մաս կազմող մասնավորեցման ենթակա կազմակերպությունների ցանկում ընդգրկված Նախարարության ենթակա ընկերություններից պահանջել մասնավորեցվող գույքի գնահատման համար լրացուցիչ ելակետային տվյալներ և պարզաբանումներ.

12) ՌԴ Էներգետիկայի նախարարության հետ բնական գազի և նավթամթերքների տարեկան ինդիկատիվ հաշվեկշիռների հաստատման նպատակով ՀՀ առաքվող նավթամթերքների քանակությունների վերաբերյալ ՀՀ մարմիններից և կազմակերպություններից ստանալ լրացուցիչ տեղեկատվությունը.

13) ԵԱՏԽ-ի հետ յուրաքանչյուր տարի՝ ՀՀ առաքվող բնական գազի և նավթամթերքների եռամյա ինդիկատիվ հաշվեկշիռների հաստատման նպատակով անհրաժեշտ տեղեկատվությունների ՀՀ մարմիններից և կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը.

14) մասնավորեցման ռազմավարությամբ պայմանավորված՝ Նախարարության ենթակա ընկերություններից ստանալ լրացուցիչ տեղեկատվություններ, հաշվետվություններ և այլ նյութեր՝ Նախարարության ենթակա պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների մասնավորեցման ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ.

15) պահանջել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին հետ սակագների, դրանց մեթոդոլոգիաների և այլ իրավական ակտերի հետ կապված փաստաթղթերին առնչվող լրացուցիչ նյութեր.

16) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնելու նպատակով՝ ստանալ տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ներկայացրած հաշվետվությունները.

17) ստանալ Բաժնի կողմից մշակվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ, կարծիքներ:

Պարտականությունները՝

1) ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով վերլուծել և ներկայացնել Բաժնի պետին Նախարարության համակարգում առկա պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների և դրանց կանոնադրական կապիտալներում պետության բաժնեմասի չափերի վերաբերյալ տեղեկատվությունը.

2) ուսումնասիրել և ներկայացնել Բաժնի պետին Նախարարության ենթակա ընկերություններից ստացած՝ նախորդ տարվա գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե շահութաբաժինների վճարման չափերի մասին ամփոփ առաջարկությունը, ֆինանսական հաշվետվությունների և շահութաբաժինների հաշվարկները, հարկային մարմիններին ներկայացված և վերջիններս կողմից հաստատված՝ շահութահարկի հաշվարկների պատճենները ու ՀՀ կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագրերի առկայության դեպքում՝ նաև իրականացված (իրականացվող) ծրագրի

շրջանակներում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկանքները.

3) վերլուծել Նախարարության ենթակայության ընկերությունների տարեկան գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթների բաշխման և տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովների որոշումների արձանագրություններից քաղվածքները և առաջարկություններ ներկայացնել Բաժնի պետին.

4) ուսումնասիրել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված ձևաչափին համապատասխան համակարգի ընկերություններից տնտեսական ցուցանիշների վերաբերյալ ստացված տեղեկատվությունները:

5) վերլուծել «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» վարկային համաձայնագրի շրջանակներում «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ներին տրամադրվող վարկային միջոցների կանխատեսվող մասհանումների վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություն դրանք ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված մեթոդական ցուցումների և ձևաչափերի նախարարության համակարգի միջնաժամկետ ծախսերի ծրագրում և բյուջետային հայտում ներառման վերաբերյալ.

6) ուսումնասիրել Նախարարության ենթակա ընկերություններից ստացված՝ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և կանխատեսվող ֆինանսական հոսքերի, ֆինանսատնտեսական ցուցանիշների կանխատեսումների, նպատակային ծախսումների վերաբերյալ տեղեկատվությունը (համապատասխան ձևաչափերով) և արդյունքները ներկայացնել Բաժնի պետին.

7) ուսումնասիրել և ներկայացնել Նախարարության ենթակա ընկերություններից ստացված գործարար ծրագրերը, կառուցվածքները և հաստիքացուցակները, եկամուտների և ծախսերի տարեկան և միջանկյալ հաշվետվությունները, համեմատական ծախսերը և ծախսային նախահաշիվները.

8) վերլուծել Նախարարության ենթակա ընկերություններից ստացված կիսամյակային և տարեկան հաշվապահական հաշվետվությունները (Ձև 1 և Ձև 2), Նախարարության ենթակա ընկերությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, հարկերի գծով ունեցած պարտավորությունների, ընկերությունների հարկերի, պարտավորությունների և վճարումների վերաբերյալ հարկային մարմիններից ստացված ամենամյա տվյալների ամփոփման, մարման կանխատեսումների վերաբերյալ ստացված տեղեկատվությունները (ըստ սահմանված ձևաչափերի) և ամփոփ տեղեկանքը ներկայացնել Բաժնի պետին.

9) կազմել և ՀՀ վիճակագրական կոմիտեին տրամադրել «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ից թիվ 1 (ամսական) և թիվ 2 (ամսական) վիճակագրական, ըստ տնտեսության ճյուղերի Էլեկտրական Էներգիայի բաշխման հաշվեկշռի, ինչպես նաև տրանսպորտի բնագավառին վերաբերող համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) միջոցով ստացված տվյալների հաշվետվությունները.

10) վերլուծել Նախարարության ենթակա ընկերություններից աշխատողների թվաքանակի, միջին ամսական աշխատավարձի և աշխատավարձի ֆոնդի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը (համապատասխան ձևաչափերով) և ներկայացնել համապատասխան առաջարկություն.

11) ուսումնասիրել միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի հիմքում դրվող առանձին եկամուտների գծով բյուջետային մուտքերի՝ Նախարարության ենթակայության ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերի կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվությունը.

12) վերլուծել Էներգահամակարգի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը և առաջարկությունները.

13) ստուգել Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի մաս կազմող մասնավորեցման ենթակա կազմակերպությունների ցանկում ընգրկված Նախարարության ենթակա ընկերություններից ստացված մասնավորեցվող գույքի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթում առկա տվյալների արժանահավատությունը.

14) վերլուծել ՌԴ Էներգետիկայի նախարարության հետ բնական գազի և նավթամթերքների տարեկան ինդիկատիվ հաշվեկշիռների հաստատման նպատակով ՀՀ առաքվող գազի և մի խումբ նավթամթերքների քանակական ցուցանիշների վերաբերյալ ՀՀ մարմիններից և կազմակերպություններից

ստացված տեղեկատվությունները և ներկայացնել համապատասխան առաջարկություն ռուսական կողմի հետ փոխհամաձայնեցման համար.

15) վերլուծել ԵԱՏԽ-ի հետ բնական գազի և նավթամթերքների եռամյա ինդիկատիվ հաշվեկշիռների հաստատման նպատակով ՀՀ առաքվող բնական գազի և մի խումբ նավթամթերքների քանակական ցուցանիշների վերաբերյալ ՀՀ մարմիններից և կազմակերպություններից ստացված տեղեկատվությունները և ներկայացնել համապատասխան առաջարկություն.

16) վերլուծել ընդերքի ոլորտի կազմակերպությունների կողմից վճարած բևոգտագործման վճարների (ներառյալ ռոյալթիների), տուրքերի վերաբերյալ ստացված ամսեկան տեղեկատվությունը և ներկայացնել համապատասխան առաջարկություն.

17) քննարկել մասնավորեցման ռազմավարությամբ պայմանավորված՝ Նախարարության ենթակա պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների մասնավորեցման ծրագրերի վերաբերյալ առաջարկությունները և վերլուծել Նախարարության ենթակա ընկերություններից ստացված տեղեկատվությունները և հաշվետվությունները.

18) ուսումնասիրել տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ստացված հաշվետվությունները և և ներկայացնել Բաժնի պետին.

20) նախապատրաստել որոշումների, հրամանների ու գրությունների նախագծեր և տեղեկանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

բարձրագույն կրթություն:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Բանակցությունների վարում
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և դեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի

ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: